



Պ. ՇԱՀԲԱՋՅԱՆ

(Հոգեւոր ձեմարանի դասախոս)

ԵՎԵՐԵՐԻ ԺԵՆՏԵՄԵՐՏԻ ՄԵԺ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Տասնհինգ դար շարունակ հայ ժողովուրդը, ամեն տարի, խորին երախտագիտությամբ, ոգևորությամբ և ազգային հպարտության ամենազերմ զգացումներով մեծարում է Վարդանանց՝ պատերազմի նահատակների սուրբ և անմահ հիշատակը։ Վարդանանց պատերազմը մեր պատմության մեջ որակվել է որպես «կրոնական» և «ազգային-ազատագրական» պատերազմ։

Վարդանանց պատերազմը հայ ժողովուրդի մղած ճակատամարտն էր գերազանցապես ազգային վտանգված սրբությունները պահպանելու համար։ Ահա թե ինչու տասնհինգ դար շարունակ հայ ժողովուրդը տոնում է միայն այս տոնը, որը սովորական ու պարզ աչքի համար կառող է թվալ սոսկ ինչոր ճակատամարտի տարեդարձ։ Հայ ժողովուրդը երբևէ ռազմատենչ, ռազմամոլ ժողովուրդ չի եղել։ Հայ ժողովուրդը Վարդանանց տոնի մեջ տեսնում է ոչ թե ինչ-որ իր զենքի հաջողությունը։ Մեր պատմության մեջ քիչ չեն նման դեպքեր։ Բայց հայ ժողովուրդը այդ դեպքերի հիշողությունը չի պահել՝ մարմնավորելով դրանք առանձին տոնի մեջ։ Մինչդեռ հայությունը միշտ տոնում է ու պիտի տոնի Վարդանանց ճակատամարտի տոնը մեծագույն սիրով, երախտագիտությամբ, ազգային արդար հպարտությամբ և խանդաղատանքով։

Անշուշտ Վարդանանց պատերազմը ունեցել է իր սոցիալ-քաղաքական շարժառիթները։ Ինչպես հայտնի է մեզ պատմությունից, 387 թվականին Հայաստանը բաժանվեց

Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև։ Հայաստանի մեկ հինգերորդը վարչականորեն միացվեց Բյուզանդիային՝ կորցնելով ազգային ինքնուրույնության վերջին հնարավորությունն անգամ։ Արևելահայաստանը ավելի քան 50 տարի պահեց իր կիսանկախ դրությունը։ Մանթէ, որ երկու հարևան հզոր պետությունների կողմից սպառնացող վտանգը հակադրեց իր տառերը՝ հիմք դնելով սեփական մշակույթի։ Ստեղծելով իր դպրությունն ու սեփական մշակույթը՝ հայ ժողովուրդը հիմնովին վերափոխեց իր դեմքը՝ վերածնունդով քրիստոնեական բարձրագույն սկզբունքների համաձայն։ Հայ ժողովուրդը այնուհետև աճեց մշակութապես, աճեց հոգեպես՝ հաղորդակից դառնալով ավելի մեծ քաղաքակրթության։ Հայ ժողովուրդի ազգային ինքնագիտակցության պայծառացումն ու բյուրեղացումը, իր իսկ կողմից ստեղծված մշակույթի հետևանքով, չէր կարող դուր գալ Պարսկաստանին։ Մյուս կողմից՝ պարսիկները շատ լավ գիտեին մեր ազգային ամենամեծ թուլությունը՝ հայ իշխանների կենտրոնախույս և փառասիրական ձգտումները։ Նրանք ժամանակը հասած համարեցին 450-ական թվականներին հայ ժողովուրդը վերջնականապես իրենց մեջ ձուլելու համար։

Ի տարբերություն մեր՝ և դարի պատմիչ Ղազար Փարպեցու, որը Մյուսյաց նախարարական տան ներսում տեղի ունեցած ինչ-որ երկպառակություններով և բնատանկան ներ-

քին ինտրիգներով է բացատրում այդ արյունահեղ ճակատամարտը, մեր մյուս պատմիչը՝ Նղիշեն, իր Պատմության ընծայականի մեջ, իր գործի լրջությանն ու տարողությանը՝ գիտակցիտնական պատմաբանի

պատճառների մասին Նղիշեի շարադրանքը, որով տրվում է այդ ժամանակվա Հայաստանի քաղաքական դրության բազմակողմանի, հանճարեղ նկարագրությունը։ Համառոտակի նկարգենք, ըստ Նղիշեի տվյալների,



ՆՈՒՐ ԳԱՐՅԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

հմտությամբ տալիս է այդ մեծ հղելության հանգամանալից վերլուծությունը՝ պարզելով վարդանանց պատերազմի հիմնական պատճառները, դեպքերի զարգացման ընթացքը և հետևանքները։ Իհարկե, մենք հակված ենք ավելի ողջամիտ և դատողության մոտիկ համարել Ավարայրի պատերազմի դրդա-

սոցիալ-քաղաքական ու տնտեսական այն իրավիճակը, որ գոյություն ուներ այդ շրջանում Հայաստանում։ Մի կողմից՝ թուլացել էր Բյուզանդական կայսրությունը, մյուս կողմից՝ պարսիկները առավել ևս թուլացնելու համար հայերի ներքին դիմադրական ուժը՝ սահմանափակել էին հայ իշխանների

ժառանգական իրավունքները, սկսել էին պառակտիչ գործունեություն, գրգռում, լարում էին նախարարական տները մեկը մյուսի դեմ: Դատարանական գործը խլվելով հայ հոգևորականության ձեռքից՝ հանձնվում է պարսիկներին. ծանրացվում է հարկային քաղաքականությունը: Ստեղծվում է տնտեսական խիստ ծանր դրություն: Պարսիկ հարկահանները մինչև յոթերորդ կաշին քերթում էին հայ գյուղացուն: Համաժողովրդական դժգոհությունը վարակել էր հասարակության բոլոր խավերին, իրավազրկված էին և՛ նախարարական տները, և՛ հոգևորականությունը, և՛ աշխատավոր գյուղացիությունը: Պարսիկական արբեռնիքը նենգամտորեն Հայաստանից դուրս էր հանել հայ ժողովրդի ռազմական ուժը: Հայ երիտասարդության ծաղիկը մաշվում էր հոների, քուշանների և այլ անապատաբնակ ցեղերի դեմ սկսված պատերազմի մեջ: Այսպիսով, արտաքին բոլոր պայմանները նպաստավոր էին պարսկական քաղաքականության հաղթանակի համար: Միայն մեկ բանի հետ պարսիկները հաշվի չէին նստել: Նրանք չէին նախատեսել (այդ իրենց ուժերից վեր էր) ոգու հակազդեցությունը: Նրանք չէին կարողացել ըմբռնել ու գնահատել այն հրաշքը, որ կատարել էր Սահակ-Մեսրոպյան հանճարը հայ ժողովրդի կյանքում: Նրանք կործանում էին հեշտությունը գլուխ բերել իրենց սկսած գործը, այսինքն՝ հայերի դավանափոխության և վերջնականապես Պարսկաստանի մեջ ձուլվելու գործը: Հայ ժողովրդին սպառնացող այս համազգային վտանգի դեմ, իհարկե, միամտություն կլինեք կարծել, որ հայերը միատարր և միակամ էին: Հայաստանում կար երկու ուղղություն՝ պարսկասիրական և հունասիրական: Եվ այդ երկու հակընդդեմ ուղղությունների առկաությունը է բացատրվում Վարդանի և Վասակի հակասությունը: Անշուշտ այդ երկու ուղղությունների հիմքը ֆեոդալական կամ կալվածատիրական շահերն էին: Վասակը իր երկրի աշխարհագրական դիրքի իսկ բերուցումով հակված էր դեպի Պարսկաստան, Մամիկոնյանները և՛ իրենց դատարարականությամբ, և՛ իրենց կալվածների աշխարհագրական դիրքով հակված էին դեպի Բյուզանդիա:

Բայց վերևում նշված այս շարժառիթներով դժվար է բացատրել Վարդանանց պատերազմի էությունը, որովհետև երբ վտանգը մոտեցել էր հայրենի սահմաններին, Վարդանանց զենքի դիմեցին առանց հաշվի առնելու այն օգնությունը, որ կարող էին ստանալ կամ չստանալ Բյուզանդիայից: Ո՛չ մեկ ժամանակ մեր պատմության մեջ հայ ժողովուրդը այնքան անօգնական չի եղել, որքան Վարդա-

նանց պատերազմի ժամանակ: Բայց հակառակ այդ բոլոր աննպաստ պայմաններին, հայ ժողովուրդը չվարա-այնուամենայնիվ, հայ ժողովուրդը չվարանեց զենք բարձրացնել պարսկական հզոր տերություն դեմ և նահատակվեց ամբողջությամբ, իհարկե ոչ բառիս նեղ իմաստով: Ահա այդ համազգային գիտակցված մարտիկության սրբագործումն է Վարդանանց ճակատամարտի տոնը: Հայ ժողովուրդը տոնում է ո՛չ թե ճակատամարտի հիշողությունը, այլ իր իսկ ցուցաբերած ոգու սիրազոր-ծությունը, որն այնքան հանճարեղ կերպով մեկնաբանված է Նդիշեի Պատմության էջերում՝ աֆորիզմի ձևով խտանալու համար հետևյալ փոքրիկ նախադասության մեջ. «...Որպես և ասաց ոմն ի հնոցն, մահ ոչ իմացեալ՝ մահ է, մահ իմացեալ՝ անմահություն է»: Այս գիտակցության պանծացումն է Վարդանանց տոնը, որ հավասարապես տոնվում է և՛ եկեղեցիներում, և՛ ազգային բնակավայրում: 451 թվականի մայիսի 26-ին հանուն քրիստոնեական կրոնի հայ ժողովրդի մղած դուցազնամարտը միաժամանակ դուցազնամարտ էր հանուն իր սրբությունների: Ահա թե ինչու Ավարայրի դաշտում հայ ռազմիկի հնչեցրած ռազմահրավերը հետևյալն էր. «Վասն Հայրենեաց, վասն Յիսուսի»:

Վարդանանց ճակատամարտը տեղի ունեցավ 451 թվականի մայիսի 26-ին: Վարդանի զորքի տակ հավաքված էր մոտ 66 000 զորք՝ առավելաբար բաղկացած որքան նախարարական տներից, նույնքան և ավելի ժողովրդական տարրերից: Վարդանանց պատերազմի ոգեշնչող ուժը հանդիսացավ հայ հոգևորականությունը հանձինս Մեսրոպյան աշակերտների՝ Նովսեփ կաթողիկոսի, Ղեվոնդ երեցի և նրանց գործակից մյուս հոգեվորականների: Ժողովրդի ընտրությունը կանգ էր առել Վարդանի վրա, որպես իր ռազմական դիմադրության ղեկավարի: Վարդանը ժողովրդական կամքի արտահայտություն էր և հրամայում էր ժողովրդին՝ արտահայտելով նրա կամքը և կոչվում հանուն նրա: Հայոց երկրի սպարապետը փոքր հասակից ստանալով խիստ կրոնական դատարարականություն՝ այնուհետև սնվել ու մեծացել էր Սահակ-Մեսրոպյան դպրոցի առողջ մթնոլորտում, հայրենասեր ուսուցիչների ձեռքի տակ, որոնք նրա հոգում արմատավորել էին կրոնասիրության, ազգասիրության և հայրենասիրության ամենաբերմունքալից ցեղանկարները: Այնպիսի ժամանակ, երբ դեռ չկար ազգային միության գաղափար, ընդհանուր շահերի ըմբռնում շատ նախարարներին մեջ, երբ դեռ շատ իշխաններ փաստորեն զուրկ էին ընդհանուր հայրենիքի գաղափարից, երբ

դեռ մասնատված ազնվականների համար «հայրենիք» հասկացողությունը սահմանափակված էր սոսկ իրենց հայրենական կալվածքների շրջանակով, Վարդանը նրանցից էր, որոնք գործում էին համահայկական ընդհանուր շահերի ըմբռնումով ու գիտակցությամբ, գիտակցություն, որ նրա մեջ պատվաստել էր Հայաստանյայց Նկեղեցին այդ օրերին, որպես միակ համահայկական ընդհանուր կազմակերպություն:

Վարդանը, այնպես ինչպես պատկերված է Նղիշին պատմության մեջ, իբրև մարդ և իբրև զորավար օժտված է բնավորության այնպիսի դրական գծերով, որոնք հայ սերունդների աչքին նրան դարձրել են մեր անցյալի հայրենասեր զորավարների շքեղ փաղանգի ամենալուսավոր դեմքերից մեկը: Իր ժողովրդի դժբախտ ճակատագրի իսկ բերումով, շնայած նա ստիպված է եղել հաճախ վերցնել զենք, բայց միշտ ձգտել է հաշտ ու խաղաղ կյանքի, սիրել արդար ու շինարար աշխատանքը: Նրա գերագույն ցանկությունը, սերբազան իդեալն է եղել տեսնել իր ժողովրդին օտար լծից ազատ, ինքնիշխան, միակ տերն ու տնօրինողը իր սեփական ճակատագրի: Ավելի լավ կարելի է բնութագրել Վարդանին, քան այդ անում է Նղիշին զորքին ուղղված Վարդանի ճառի մեջ, որն ամենայն իրավամբ կարելի է համարել Նղիշին պատմական երկասիրության ամենափայլուն և անկրկնելի էջերից մեկը:

Վարդանի հակառակ, Վասակն ու իր կողմնակիցները ոչ միայն իրենց նախնիաց գործունեությամբ ջլատում էին հայ ժողովրդի միաբանությունը, այլև վճռական պահին, երբ արհավիրքը ծնծում էր Հայաստանի դռները, սուր բարձրացրին իրենց սեփական ժողովրդի վրա: Զուր են մեր մի շարք պատմաբանների փորձերը արդարացնելու Վասակին: Վասակը ոչ մի դեպքում չի կարող արդարանալ ժողովրդի արդար ու անողոր դատաստանի առաջ, և պատահական չէ, որ մինչև այսօր էլ Վասակ անունը համապոր է դավաճան անվան:

Տվյալ դեպքում հարցը հայ ժողովրդի լինելու կամ չլինելու խնդիրն էր: Ահա այդ էր, որ չըմբռնեց Վասակը: Հազվերտի հավատուրացություն թուղթը, ինչպես նշեցինք, միայն կրոնական հարց չէր. հայերի դավանափոխությամբ Հազվերտն ուզում էր ցամաքեցնել այն ակունքը, որտեղից սնվում էր հայ ժողովրդի կենդանությունն ու կենսունակությունը: Հարվածելով ահա քրիստոնեությունը՝ Հազվերտը հարվածում էր հայ ժողովրդին իր ամբողջության մեջ: Ահա այս է, որ Վասակը չըմբռնեց: Նա չըմբռնեց նաև այն, ինչ կարող էր կազմել որակապես բարձր,

բայց թվով փոքր ժողովուրդների միակ անպարտելի զենքը: Փոքր ժողովուրդների դիմադրական ամենամեծ զենքը հավատն է՝ խառնված իր ազգային սրբությունների վրա: Փոքր ժողովուրդները մեռնելով միայն կարող են ապրել. այս է Վարդանանց պատերազմի հիմնական խորհուրդը, որը գերազանց կերպով գիտակցվեց Վարդանի կողմից, բայց ոչ Վասակի: Ահա այդ գիտակցությունն էր, որ հերոսացրեց Վարդանին, իսկ Վասակին դարձրեց դավաճան:

Թե ինչպես վերջացավ Ավարայրի ճակատամարտը՝ հայտնի է բոլորին: Հայերը տանուլ տվին այդ ճակատամարտը, բայց պատերազմը՝ ոչ: Ինչպես գիտենք հետագա դեպքերի զարգացումից, պատերազմը փոխեց իր ձևը. Վարդանի մահից հետո, հայ խորքը նահանջեց թշնամու թվական գերազանցության առաջ, դիմադարձ հարձակումներով ամրացավ անտառների և անառիկ վայրերի մեջ: Պարսկական նվաճողները ներխուժեցին Հայաստանի խորքերը. բայց հայերը չդադարեցրին իրենց դիմադրությունը. մերթ այստեղ, մերթ այնտեղ նրանք շարունակում էին կռվել պարբերական ընդհատումներով: Ինչ չհաջողվեց կատարել Վարդանին, կատարեց նրա եղբորորդին՝ Վահան Մամիկոնյանը: 481 թվականի հայ ժողովրդի անստամբությունը՝ Վարդանանց պատերազմի շարունակությունն էր, որն այս անգամ պսակվեց հաջողությամբ 484 թվականին կնքված նվարսակի դաշնագրով: Այդ դաշնագրով հայ ժողովուրդը վերանվաճեց իր արժանավորությունը, վերականգնեց իր երկրի ներքին անկախությունը: Առաջ Ավարայրի չէր կարող հաղթանակել հայերի երկրորդ անստամբությունը: Վարդանի, ինչպես նաև հայկական համագունդի նահատակությունը տվեց իր արդյունքը: Վարդանն ու Վարդանանք մեռան, որպեսզի ապրի հայ ժողովուրդը: Եվ հայ ժողովուրդը ապրեց՝ հասնելով մինչև մեր օրերը: Պատմությունը քանիցս ցույց է տվել, որ վերածնվում են միայն այն ժողովուրդները, որոնք գիտեն մեռնել, գիտակցաբար մեռնել:

Բոլոր փորձությունների միջով հայ ժողովրդի գոյատևման փաստով է բացատրվում Վարդանանց պատերազմի խորհուրդն ու իմաստը: Եվ այդ փաստը մեզ ներշնչում է այն համոզումը, որ ապրել կարող են միայն այն ժողովուրդները, որոնք գիտեն և մեռնել. ՎՄահ ոչ իմացեալ՝ մահ է, մահ իմացեալ՝ անմահություն է: Այս է Վարդանանց պատերազմի գաղափարական ուսանելի կողմը մեզ համար, որ մեր ժամանակից դեռևս ավելի քան մեկ ու կես հազարամյակ առաջ սրբազան նշանաբանն է եղել Մեսրոպ Մաշտոցի, Սահակ Պարթևի, Խո-

րենացու, Բյուզանդի, Եղիշեի, Փարպեցու, Եզնիկի և մեր մյուս լուսավոր դեմքերի, որոնք անմահ փառքով պսակեցին իրենց դարը և լուսավոր ուղի բացեցին գալոց սերունդների առաջ:

Վարդանանց դյուցազնամարտը դարեր շարունակ ներշնչել է բազմաթիվ հայ ազնավոր գրողների, որոնք հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցած այդ նշանակալից իրադարձությունը ներբողել են մեծ ոգևորությամբ: Մեր վերածնության դարաշրջանի այնպիսի գրողներ, ինչպիսիք են Շնորհալին, Հովհաննես Իմաստասերը, Գրիգոր խլաթեցին և ուրիշներ, բանաստեղծական խոր ապրումով գրված բազմաթիվ երգերի մեջ գեղարվեստական մարմնավորում են տվել այդ թեմային: Մեր նոր շրջանի գրականության մեջ նույնպես այդ ճակատամարտը դարձել է գովքի ու երգի նյութ: Յուրաքանչյուր հայ ընթերցողի հայտնի են Ալիշանի, Սրվանձտյանի, Դուրյանի, Պատկանյանի, Դեմիրճյանի և արևելահայ ու արևմտահայ մեր մյուս դասական գրողների այդ թեմային նվիրված տարբեր ժանրի բազմաթիվ ստեղծագործություններ: Այս բոլորը վկայում են այն մասին, որ հայ ժողովրդի պատմական ճակատագրից անբաժան է եղել նրա մղած պայքարը օտար-երկրյա բռնակալության դեմ՝ հանուն իր ան-

կախության և ազգային ինքնությունության: Ընդամենն անգամ իր ժողովրդի ազատության և ազգային սրբությունների անաղարտ պահպանման նախանձախնդիր հայ գրողը բուռն կրքով և անկեղծ ներշնչանքով է տարբերել Տղմուտ գետի ափին տեղի ունեցած այդ մեծ ճակատամարտը՝ նրա մեջ տեսնելով իր իդեալների ու իդեալների լավագույն արտահայտությունը:

Վարդանին և նրա հետ զոհված 1036 բաջ նահատակներին սրբացրել է մեր Եկեղեցին: Նրանց անմահ հիշատակը թող ոգեշնչի մեզ՝ ընդմիշտ հավատարիմ մնալու այն ոգուն, որին վկայելու համար նահատակվեցին Վարդանն ու Վարդանանք: Նրանք նահատակվեցին՝ վերապրելու համար մեր մեջ: Իսկ մենք այնքան ժամանակ, որ հավատարիմ կմնանք այդ ոգուն, ինչպես բանաստեղծն է ասում, երբեք գետնով չենք տա Վարդանի սաղավարտը: Մեր ժողովուրդը եղել է և կլինի հար հավիտյան: Թող օրհնվի Վարդանի այն սուրը, որ բարձրացավ հանուն մարդկային խղճի ազատության՝ սպանելու համար շարիքը: Բարձրացավ, որպեսզի հավերժ թագավորի խաղաղությունը աշխարհում, որի պայմաններում միայն մարդը արժանի կլինի կոչվելու մարդ՝ իր աստվածատուր բոլոր շնորհներով:

